

Լեռնային Ղարաբաղի հակամարտություն (1988 թվականից մինչ օրս)

Նախապատմություն և համատեքստ

Լուսինե Խառատյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության
և ազգագրության
ինստիտուտ,
Երևան, Հայաստանի
Հանրապետություն

1
Արցախը մեծ Հայքի՝
Հայկական լեռնաշխարհի
հնագույն պետության
10-րդ հազարամյակի
պատմական անվանումն է:
Պատմականորեն Արցախն
ընդգրկում էր Լեռնային
Ղարաբաղի տարածքը,
և ներկայում այս եզրը
լայնորեն օգտագործվում
է հայերի կողմից Լեռնային
Ղարաբաղի առնչությամբ:
2017 թ. փետրվարին
Լեռնային Ղարաբաղի դե
ֆակտո Հանրապետությունն
իր հայ բնակչության
կողմից ընդունված նոր
սահմանադրությամբ
պաշտոնապես
վերանվանվեց «Արցախի
Հանրապետություն»:

2
Այս բախումները
հիմնականում հայտնի են
որպես հայ-թաթարական
ընդհարումներ կամ ջարդեր,
քանի որ «ադրբեջանցի»
Էթնոհիմն առաջին անգամ
ներմուծվել է 1939 թ. ԽՍՀՄ
մարդահամարի ժամանակ:
Մինչ այդ եղած աղբյուրները
և գրականությունը, ինչպես
նաև մարդահամարները
տարբեր եզրեր էին կիրառում
Հարավային Կովկասի
թաթարոս մուսուլմանների
վերաբերյալ, ինչպես, օրինակ՝
«մուսուլման», «թուրք» և
«կովկասյան թաթար»:

3
Նման օրինակներ են
նաև վրաց-աբխազական
և վրաց-օսական
հակամարտությունները,
ինչպես նաև մերձդնեստրյան
հակամարտությունը:

Լեռնային Ղարաբաղի կամ Արցախյան¹ հակամարտությունը
Նախկին ԽՍՀՄ-ի տարածքում տեղի ունեցած ամենաերկարատև և դաժան
հակամարտություններից է: Տարիների ընթացքում այն հազարավոր կյանքեր
է խլել Հայաստանում և Ադրբեջանում, տեղահանել միլիոնից ավելի մարդու՝
ադրբեջանցիներին Հայաստանից, Լեռնային Ղարաբաղից և դրան հարող
տարածքներից և հայերին Ադրբեջանի իրենց բնակավայրերից, վերջերս
նաև Լեռնային Ղարաբաղից: Հաճախ ասում են, թե հակամարտությունը
սկսվել է 1980-ականներին, սակայն այն կարելի է թվագրել 20-րդ դարի
սկզբին: 1905–1920 թթ. Հարավային Կովկասի տարբեր վայրերում
միջէթնիկ ընդհարումներ են եղել հայերի և ադրբեջանցիների միջև,
նախ՝ ցարական շրջանում (1905-1907), այնուհետև՝ կրկին Հայաստանի և
Ադրբեջանի կարճատև անկախության ընթացքում (1918-1920 թթ.)²: Սրան
հաջորդած խորհրդային կարգերի հաստատումից հետո սահմանները
Հարավային Կովկասում վերազնվեցին համաձայն խորհրդային ազգային
քաղաքականության, որը նաև տարբեր աստիճանի ինքնավարություն
էր տալիս այս կամ այն Էթնիկ խմբին և ազգային հանրապետությունների
ներսում Էթնիկ կազմի առումով տարբերվող անկլավներ էր ստեղծում:
Այսպիսով՝ 1923 թ. մեծ մասամբ հայերով բնակեցված Լեռնային Ղարաբաղը
փոխանցվեց Ադրբեջանին՝ Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմում ինքնավար
մարզի կարգավիճակով: Մարզը կոչվում էր Լեռնային Ղարաբաղի
Ինքնավար Մարզ (ԼՂԻՄ): Ինչպես հետագայում ԽՍՀՄ-ի փլուզմանը տանող
գործընթացը ցույց տվեց, խորհրդային ազգային քաղաքականությունը
հակամարտության մեծ ներուժ ուներ³:

Ներկայիս հակամարտությունը սկզբնավորվել է 1988 թ., երբ ԼՂԻՄ-ի
հայերը, ոգևորվելով գորբաչովյան վերակառուցման և գլաստնոստի
քաղաքականությամբ, պահանջեցին մարզի փոխանցումը խորհրդային
Ադրբեջանից խորհրդային Հայաստանին:

Խորհրդային շրջանում փոխվել էր մարզի ժողովրդագրությունը.
Նվազել էր հայերի թիվը, աճել՝ ադրբեջանցիներինը: Հայերը հայտնում էին
նաև ադրբեջանական իշխանությունների՝ իրենց հանդեպ խտրականության
մասին (Նյու Յորք Թայմս, 1977): Այսպիսով՝ 1988 թ. սկզբին Լեռնային
Ղարաբաղի հայերը վերակառուցումն ընկալեցին որպես Հայկական ԽՍՀ-ին
միանալու իրենց ցանկությունն օրինական ճանապարհով արտահայտելու
հնարավորություն: Միևնույն ժամանակ, Հայկական ԽՍՀ-ում լայնորեն
մեկնարկեց Ղարաբաղի հայերին սատարող Ղարաբաղյան շարժումը, որը
նույնպես Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու կոչ էր անում:

Այս զարգացումներին ի պատասխան՝ 1988 թ. փետրվարի 27-29-ին
Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում տեղի ունեցան հայերի կազմակերպված

ջարդեր: Որոշ հետազոտողների կարծիքով սումգայիթյան ջարդերն արթնացրին 1915 թ. Հայոց ցեղասպանության հիշողությունը (Abrahamian, 2006; Marutyan, 2009)⁴: Ըստ նրանց՝ այս հիշողությունները հայերին օգնեցին մտածելու խորհրդային ներկայի հարացույցներից անդին և ճեղքելու խորհրդային քարոզչության ազդեցությունը, ինչպես նաև հիմք դարձան Հայաստանի անկախացմանը հանգեցնող հեղափոխական փոխակերպումների համար (Marutyan, 2009): Այսպիսով՝ Լեռնային Ղարաբաղի և Հայոց ցեղասպանության հարցերը սերտորեն փոխկապակցված էին և հետագայում դարձան հայկական ազգային պետության կառուցման հիմնաքարերը⁵: Մինևույն ժամանակ, Լեռնային Ղարաբաղը ադրբեջանական ազգային պետության սահմանող հատկանիշներից էր, քանի որ խորհրդային Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը պահպանելը վճռորոշ էր անկախ Ադրբեջանի Հանրապետության համար:

Այսպիսով՝ դրվեցին Լեռնային Ղարաբաղի ժամանակակից հակամարտության հիմքերը, ինչն ի վերջո վերածվեց հայ-ադրբեջանական երկկողմ ռազմական հակամարտության: ԽՍՀՄ-ի փլուզումն ընթացքի մեջ էր: 1991 թ. օգոստոսի 30-ին Ադրբեջանը հռչակեց իր անկախությունը: Լեռնային Ղարաբաղի հայերը, ի պատասխան, սեպտեմբերի 2-ին ընդունեցին հռչակագիր, որով հայտարարում էին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) ստեղծման մասին: Իրավիճակն արագորեն վերաճեց լայնածավալ պատերազմի: Ադրբեջանական զինված ուժերը սկսեցին գրեթե անդադար հրետակոծել Լեռնային Ղարաբաղի հայկական բնակավայրերը, իսկ արցախահայերը Հայաստանի և Սփյուռքի կամավորների հետ զինվեցին և ինքնապաշտպանական խմբեր կազմավորեցին: Լեռնային Ղարաբաղի առաջին պատերազմի ամենաողբերգական իրադարձություններից մեկը համարվում է 1992 թ. փետրվարին տեղի ունեցած Խոջալուի կոտորածը, երբ հարյուրավոր ադրբեջանցիներ սպանվել, գերեվարվել կամ փախստական են դարձել (De Waal, 2013): Պատասխան վրեժը նույն թվականի ապրիլին տեղի ունեցած Մարաղա գյուղի հայ բնակիչների կոտորածն էր:

Պատերազմը տևեց երկու տարի՝ 1992-1994 թթ., և ավարտվեց Ռուսաստանի բանակցած փխրուն զինադադարով 1994 թ. մայիսին: Նախկին ԼՂԻՄ-ը, Ադրբեջանի տարածքի յոթ հարող շրջաններով հանդերձ, անցավ հայկական ուժերի վերահսկողության տակ:

Լեռնային Ղարաբաղի առաջին պատերազմի ավարտից հետո նախկին ԼՂԻՄ-ի տարածքում ստեղծվեց դե ֆակտո հայկական պետություն: Չճանաչված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ), որը հետագայում վերանվանվեց Արցախի Հանրապետություն՝ Ստեփանակերտ մայրաքաղաքով, ուներ իր ազգային խորհրդանիշները, իշխանության օրենսդիր, գործադիր և դատական ճյուղեր, ինչպես նաև բանակ:

Չինադադարը ֆորմալ ուժի մեջ մնաց մինչև 2020 թ. սեպտեմբերը, թեև այս տարիների ընթացքում Ղարաբաղյան հակամարտության շփման գծում, այդ թվում՝ հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով, եղել են անկանոն փոխհրածոություններ, բախումներ և հրադադարի խախտումներ՝ չնայած Ֆրանսիայի, ՌԴ և ԱՄՆ նախագահությամբ գործող ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում ընթացող խաղաղության բանակցություններին: Այս ընթացքում ամենաթեժ

Ինքնահռչակ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (Արցախ) և հարակից շրջանները Լեռնային Ղարաբաղի առաջին պատերազմից հետո:

Էվան Սենտանի

Քաղաքական աշխարհագրությունն այժմ, CC BY-SA 3.0, <https://www.polgeonow.com/2018/01/artsakh-name-change-nagorno-karabakh.html>, դիտվել է 2024 թ. փետրվարի 14-ին:

ընդհարումը տեղի է ունեցել 2016 թ. ապրիլին և տևել է չորս օր՝ երկու կողմում էլ հարյուրավոր զոհերի հանգեցնելով:

Տարածաշրջանը կրկին լայնածավալ պատերազմի մեջ ընկնվեց 2020 թ. սեպտեմբերի 27-ի ադրբեջանական հարձակման հետևանքով:



Սա Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմն էր, որը տևեց 44 օր և ավարտվեց նոյեմբերի 9-ին Ռուսաստանի բանակցած զինադադարով և Հայաստանի վարչապետի, Ադրբեջանի և Ռուսաստանի նախագահների եռակողմ հայտարարությամբ: Չինադադարի պայմաններով Ադրբեջանը վերականգնեց վերահսկողությունը Լեռնային Ղարաբաղին հարող յոթ շրջանների, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի զգալի մասի նկատմամբ: Հայտարարության համաձայն՝ ռուսական խաղաղապահ ուժեր տեղակայվեցին այն տարածքներում, որոնք մնացել էին դե ֆակտո Արցախի Հանրապետությունից՝ վերջինիս քաղաքացիական հայ բնակչությանը և Լաչինի միջանցքը, որն Արցախը Հայաստանին և աշխարհին կապող միակ ճանապարհն էր, պաշտպանելու համար: Նոյեմբերի 9-ի հայտարարության մեջ ասվում էր, որ խաղաղապահներն Արցախում մնալու են հինգ տարի ժամկետով: Սակայն 2022 թ. դեկտեմբերի 12-ին Ադրբեջանի կառավարությունը բնապահպանական բողոքի քողի տակ փակեց Լաչինի միջանցքը՝ սկսելով Արցախի շրջափակումը: Ծրջափակման ընթացքում բազմաթիվ հայտարարություններ եղան տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից, որոնք զգուշացնում էին ցեղասպանության հնարավորության մասին (International Association of Genocide Scholars, 2022; Lemkin Institute, 2023):

Արցախը շրջափակման մեջ մնաց հետագա ինն ամիսներին՝ մինչև 2023 թ. սեպտեմբերի 19-ը, երբ ադրբեջանական զինուժը հարձակվեց Արցախից մնացած տարածքի վրա՝ հայտարարված «հակաահաբեկչական գործողություն» անվան տակ: Գործողությունը տևեց 24 ժամ և հանգեցրեց տեղի հայկական պաշտպանական ուժերի լիակատար կապիտուլյացիային: Հինգ օր անց Բաքուն բացեց Լաչինի միջանցքը՝ փրկված հայերին թույլ տալով անցնել Հայաստան: Ի վերջո շուրջ 100,000 հայ կամ գրեթե ամբողջ արցախահայությունը տեղահանվեց և մինչ օրս բռնի տեղահանված է:

Անհրաժեշտ է նշել, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը

որոշիչ գլխավոր պատում է թե՛ Հայաստանի, թե՛ Ադրբեջանի համար: Այն ոչ միայն անդրադառնում է Հայաստանի կյանքի բոլոր կողմերին՝ միջազգային հարաբերություններից, ռազմավարական դաշինքներից, անվտանգությունից և ռազմականացումից մինչև հիմնական ապրանքների գներ, ժողովրդագրություն, տնտեսություն և սոցիալական բարեկեցություն, այլև ազդում է գրեթե յուրաքանչյուր ընտանիքի կյանքի վրա. շատերն են պատերազմներում ընտանիքի անդամ կորցրել: Այդ պատճառով այն չափազանց զգայուն է սոցիալ-քաղաքական առումով, և Նյու Յորք բազմատեսանկյուն մոտեցմամբ դասավանդելու համար մանրակրկիտ մշակված ու լավ մտածված մանկավարժական մոտեցման կարիք կա:

Հայ-ադրբեջանական սահմանի խաղաղ կյանքը խաթարվել է հակամարտության հենց սկզբից: Անգամ 1994 թ. զինադադարից հետո սահմանային շրջանները երբեք խաղաղ չեն եղել, հատկապես Հայաստանի հյուսիսարևելյան Տավուշի մարզում: Հարաբերական խաղաղության ամբողջ ընթացքում 1994-ից առ այսօր, Տավուշի սահմանամերձ գյուղերը երբեք անվտանգ չեն համարվել: Գյուղացիները չեն կարողացել մշակել իրենց հողերի մեծ մասը, գրանցվել են անասունների վնասման կամ սահմանը հատելու դեպքեր, նրանց տներից բնակիչներ են առևանգվել, և ժամանակ առ ժամանակ եղել են փոխհրաձգություններ: Տավուշի Մովսես գյուղի օրինակով հայ ուսուցիչների մշակած դասապլանը ցույց է տալիս, թե ինչպես է պատերազմը խաթարում հակամարտության գոտու սահմանային շրջանների կյանքի յուրաքանչյուր ոլորտ և ազդում դրանց վրա:

Աշակերտները մեծապես կշահեն՝ հակամարտությունը դիտարկելով ոչ թե կենտրոնի, այլ ծայրամասի դիրքից, այն մարդու տեսանկյունից, որն ապրում է հակամարտությունից առավել տուժած վայրում: Սա թույլ կտա ունենալ հակամարտության ոչ միայն պաշտոնական, վերևից ներքև, քաղաքական և գաղափարախոսական դիտանկյուն, այլև դիտարկել այն առավել խոցելիների տեսանկյունից: Իր հերթին սա կզարգացնի աշակերտների քննադատական մտածողությունը, ինչպես նաև խնդիրը կամ իրավիճակն ավելի լավ հասկանալու համար տարբեր աղբյուրներից օգտվելու կարողությունը:

Հղումներ

- Abrahamian, L. (2006) *Armenian Identity in a Changing World*. Costa Mesa, California: Mazda.
- Bakinskiy Rabochiy (1923) 'Collection of Laws and Orders of the Workers' and Peasants' Government of the ASSR for the year 1923', 9 July, №0151; in Kharatyan, H. (2021) *Khojalu "Genocide" and its Mission in Karabakh Conflict*. Yerevan: Publishing House of the Institute of Archaeology and Ethnography.
- De Waal, T. (2013) *Black garden: Armenia and Azerbaijan through peace and war*. New York: NYU Press.
- Deutsche Welle (2023) 'Azerbaijan announces "anti-terrorist" operation in Karabakh', 19 September, <https://www.dw.com/en/azerbaijan-announces-anti-terrorist-operation-in-karabakh/a-66861997>, accessed 6 February 2024.
- International Association of Genocide Scholars (2022) 'Statement on Azerbaijani Aggression Against the Republic of Armenia and the Indigenous Armenians of the South Caucasus', https://genocidescholars.org/wp-content/uploads/2022/10/IAGS-EB-Statement-Armenia-Azerbaijan-Oct-2022_update.pdf, accessed 6 February 2024.
- Lemkin Institute (2023) 'Risk Factors and Indicators of the Crime of Genocide in the Republic of Artsakh: Applying the UN Framework of Analysis for Atrocity Crimes to the Nagorno-Karabakh Conflict', https://www.lemkininstitute.com/_files/ugd/9bc553_2e-3babd9d7834d7fbcfa262f88c9fa74.pdf, accessed 6 February 2024.
- Marutyan, H. (2009) *Iconography of Armenian identity. The Memory of Genocide and the Karabagh Movement*. Yerevan: Gitutyun Publishing House.
- New York Times (1977) 'Armenians Ask Moscow for Help, Charging Azerbaijan With Bias', 11 December, <https://www.nytimes.com/1977/12/11/archives/armenians-ask-moscow-for-help-charging-azerbaijan-with-bias.html>, accessed 6 February 2024.

Դասապլան

Կյանքը սահմանային գյուղում.

դեպքի ուսումնասիրություն

Յեղիակներ

Լիլիթ Մինասյան	«Այբ» դպրոց, Երևան, Հայաստան
Նինա Հայրապետյան	«Այբ» դպրոց, Երևան, Հայաստան
Անի Թովմասյան	«Այբ» դպրոց, Երևան, Հայաստան
Մերի Մարտիրոսյան	Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոց, Հայաստան
Նաիրա Երկանյան	Համբարձում Գալստյանի անվան ավագ դպրոց, Երևան, Հայաստան
Հայկանուշ Ղևոնդյան	թիվ 122 դպրոց, Երևան, Հայաստան

Տարիք	15 տարեկան (9-րդ դասարան)
-------	---------------------------

Տևողություն	90 րոպե
-------------	---------

Հիմնական հարց	Ինչպե՞ս է պատերազմը ազդել սահմանամերձ Մովսես գյուղի կյանքի տարբեր ոլորտների վրա:
---------------	--

Ամփոփ նկարագրություն

Սահմանամերձ գյուղի առօրյան միշտ շատ տարբեր է սահմանից հեռու գտնվող քաղաքի կյանքից, և այս տարբերություններն առավել նկատելի են դառնում պատերազմի ժամանակ: Այստեղ ապրող մարդիկ պատերազմի դժվարություններն անմիջականորեն իրենց մաշկի վրա են զգում և հենց իրենց բնակավայրում ստիպված են առնչվել ռազմական բռնությանն ու ոչ անվտանգ միջավայրին: Պատերազմական ժամանակի դժվարություններն ու անկայունությունը ազդում են բոլոր տարիքային խմբերի վրա և առնչվում կյանքի բոլոր ոլորտներին՝ ներառյալ ժողովրդագրությանը, տնտեսությանը, կրթությանը և կենսակերպին: Սույն դասապլանը կենտրոնանում է Հայաստանի սահմանամերձ վայրերում վերջին երեք տասնամյակում տեղի ունեցած փոփոխությունների վրա:

Լեռնային Ղարաբաղը խորհրդային իշխանությունների կողմից Ադրբեջանին է հանձնվել 1923 թ. և մինչև 1991 թ. ինքնավար մարզ էր Ադրբեջանական խորհրդային Սոցիալիստական Հանրապետության (ԱԽՍՀ) կազմում: Թեև տարածաշրջանում հակամարտություն եղել է 20-րդ դարի սկզբին, կարելի է ասել, որ Լեռնային Ղարաբաղի (Արցախի)

ներկայիս հակամարտությունը սկսվել է 1988 թ.՝ խորհրդային Միության փլուզման սկզբում: Լեռնային Ղարաբաղի բնակիչները պահանջում էին, որ մարզը դառնա Հայկական ԽՍՀ-ի մաս, և իրավական, սահմանադրական քայլեր կատարեցին այդ նպատակին հասնելու ուղղությամբ⁶: Թեև 1989 թ. խորհրդային մարդահամարը ցույց էր տալիս, որ Լեռնային Ղարաբաղի բնակչության 77 %-ը հայ է, և 21 %-ը՝ ադրբեջանցի, հայերի ցանկությունը մերժվեց թե՛ խորհրդային Միության, թե՛ Ադրբեջանի կողմից: Վերջինս ի վերջո՝ 1991 թ., պատերազմ սկսեց Լեռնային Ղարաբաղի դեմ՝ միաժամանակ հարձակվելով հայկական այլ շրջանների վրա: Նույն թվականին հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Առաջին պատերազմում հաղթեց հայկական կողմը՝ զինադադարի համաձայնագիր ստորագրելով 1994 թ.: Խաղաղության պայմանագիր, սակայն, երբեք չստորագրվեց, և դրանից հետո երկար տարիներ շարունակվեցին ռազմական գործողությունները: Հասարակ մարդկանց կյանքն անտանելի էին դարձնում 2016, 2020 և 2023 թվականների սրացումները: 2023 թ. սեպտեմբերի ամենավերջին սրացման հետևանքով Լեռնային Ղարաբաղը ստիպված էր ընդունել Ադրբեջանի իշխանությունը ծանր կորուստների պատճառով:

Դասի ընթացքում սովորողները կվերլուծեն առաջնային և երկրորդային աղբյուրներ, կաշխատեն խմբերով, որոնցից յուրաքանչյուրը կկենտրոնանա կյանքի մի ոլորտի վրա և կանդրադառնա հակամարտության որևէ փուլի ինչ-որ մասի: Խմբերը նաև կզննատես պատերազմի ազդեցությունը այս կամ այն խմբի վրա՝ երեխաներ, երիտասարդներ, չափահասներ կամ ծերեր: «Համաշխարհային սրճարան» մեթոդի միջոցով սովորողները կմեկնաբանեն միմյանց աշխատանքները, ինչպես նաև բարելավման առաջարկներ կներկայացնեն: Ուսուցիչներին կոչ ենք անում սովորողներին ներկայացնելու և բացատրելու իրար գնահատելու չափանիշները՝ մյուս խմբերից կառուցողական քննադատություն ստանալու նպատակով: Տեսանյութը առաջադրանքը կլինի՝ գրել պատերազմի ժամանակ սահմանամերձ գյուղում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ փաստարկված էսսե՝ իրենց ընտրությամբ որևէ տարիքային խմբի տեսանկյունից: Դասը ՀՀ Տավուշի մարզի Մովսես գյուղի իրավիճակի ուսումնասիրությունն է:

Կրթական վերջնարդյունքներ

Սովորողը կկարողանա.

- համեմատել և հակադրել առաջնային աղբյուրները և դրանց հիման վրա բացահայտել ու նկարագրել հակամարտության գոտում բնակվող մարդկանց կյանքում տեղի ունեցած հիմնական փոփոխությունները,
- բացատրել պատերազմի ազդեցությունը անմիջական մասնակիցների տեսանկյունից՝ այսպիսով ապրումակցելով նրանց,
- գնահատել հակամարտության ազդեցությունը մարդկանց կյանքերի վրա և անձնական կարծիք ձևավորել:

Մանկավարժական առաջարկություններ

Դասի հաջողության համար ակնկալվում է, որ սովորողները ծանոթ են հայ-ադրբեջանական հակամարտությանը և 1988-2023 թթ.

⁶ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական պատգամավորների խորհուրդը բլեթարկել է մարզը Հայաստանին միացնելու օգտին, ինչպես նաև իրականացվել է հանրաքվե, որը բոյկոտել է մարզի ադրբեջանցի բնակչությունը, որոնց ճնշող մեծամասնությունը բլեթարկել է Հայաստանի հետ միավորվելու օգտին:

տարածաշրջանային իրադարձություններին: Հակամարտության նախապատմության վերաբերյալ ընդհանուր պատկերացում կազմելու համար դասի սկզբում սվորողներին կարճ ներածական տեքստ կտրամադրվի 1988-2023 թթ. հիմնական իրադարձությունների վերաբերյալ:

Դասը Հայաստանի սահմանամերձ գյուղի իրավիճակի ուսումնասիրությունն է: Ուսուցիչը պետք է օգտագործի առաջնային և երկրորդային տարբեր աղբյուրներ՝ սվորողների քննադատական մտածողությունը խթանելու, ինչպես նաև անաչառ ու հիմնավորված եզրակացություններ կատարելու ունակությունը խրախուսելու համար:

Ուսուցիչներին կոչ է արվում դասի սկզբում ձևավորելու հավասարակշռված խմբեր՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սվորողի ուժեղ և թույլ կողմերը՝ լավ կազմակերպված խմբային աշխատանք և հաջող ներխմբային համագործակցություն ապահովելու համար:

Ակնկալվում է, որ երկրորդ փուլից հետո (քննարկում, վերլուծություն և նյութերի պատրաստում) սվորողները պետք է շրջեն դասասենյակում և մեկնաբանեն այլ խմբերի իրենց դասընկերների աշխատանքը (Փուլ III): Խառնաշփոթից խուսափելու համար անհրաժեշտ է սվորողներին հստակ ներկայացնել «Համաշխարհային սրճարան» մեթոդը: Ուսուցիչներին խորհուրդ ենք տալիս օգտագործել պարզ ժամանակաչափ (հասանելի է առցանց)՝ սահմանված ժամկետում աշխատանքի ավարտն ապահովելու համար:

Դասընկերների գնահատման գործընթացի հաջողության համար անհրաժեշտ է, որ ուսուցիչը գնահատման չափանիշները ներկայացնի նախքան խմբային աշխատանքը սկսելը, որպեսզի սվորողները հստակ պատկերացնեն պահանջները: Դասընկերների գնահատման չափանիշների համար տե՛ս Հավելված II-ը: Դասընկերների գնահատումը երրորդ փուլի մաս է:

Ցանկալի է, որ ուսուցիչները դասարանի քննարկումը կազմակերպեն (Փուլ IV) հավասար մասնակցությամբ և ապահովեն, որ յուրաքանչյուր սվորող խոսելու հնարավորություն ունենա:

Գործողություններ

Փուլ I	
<i>Ողջույն/նախապատրաստում</i>	5 րոպե

Փուլ II	
<i>Խմբային աշխատանք</i>	40 րոպե

Սվորողները բաժանվում են 4 խմբի՝ ըստ կյանքի այն ոլորտի, որն իրենք վերլուծելու են.

- Ժողովրդագրություն
- Տնտեսություն
- Կրթություն
- Կենսակերպ/կենցաղ

Բոլոր խմբերին բաժանվում է հակամարտության վերաբերյալ

համառոտ տեքստ: Այն ուսումնասիրելուց հետո խմբերը սկսում են աշխատել հիմնական աղբյուրների հետ: Խմբերին կտրվեն ընտրված աղբյուրներ (Հավելված I), որոնք ներկայացնում են Հայաստանի անկախության և ակտիվ հակամարտության բոլոր երեք տասնամյակները (1991-2023): Աղբյուրները տեղեկություն են պարունակում Մովսեսի Ժողովրդագրության, տնտեսության, կրթության և կենցաղի վերաբերյալ: Խմբերից յուրաքանչյուրն ուսումնասիրում է բոլոր աղբյուրները: Նրանք եզրակացությունների են հանգում այդ ժամանակաշրջանում գյուղի կյանքում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ և իրենց բացահայտումները գրի առնում պաստառների վրա:

Փուլ III	
<i>Համաշխարհային սրճարան</i>	25 րոպե

Կազմակերպվում է «Համաշխարհային սրճարանը»: Բոլոր պաստառները փակցվում են պատերին, և սվորողների խմբերին հրահանգվում է շրջել դասասենյակում և 5 րոպե հատկացնել պաստառներից յուրաքանչյուրին՝ բովանդակությանը ծանոթանալու և կաշուն թերթիկների վրա առաջարկություններ գրելու համար: Նրանք պետք է օգտագործեն դասընկերների գնահատման չափանիշները (Հավելված II): Առաջարկությունները կարող են լինել ինչպես հարցեր թեմայի վերաբերյալ, այնպես էլ առաջարկներ, որոնք սվորողներն անհրաժեշտ կհամարեն:

Տվյալ պաստառի վրա աշխատանքն ավարտելուց հետո սվորողներն անցնում են հաջորդին: Խմբերը պետք է 20 րոպե հատկացնեն այլ խմբերի պաստառների ուսումնասիրությանը և այնուհետև ևս 5 րոպե՝ համադասարանցիներից ստացված առաջարկությունների հիման վրա իրենց պաստառը բարելավելուն:

Փուլ IV	
<i>Դասարանային քննարկում</i>	20 րոպե

Հիմնական հարցի շուրջ նախատեսվում է դասարանային քննարկում: Սվորողները, արդեն ծանոթ լինելով կյանքի յուրաքանչյուր ոլորտում տեղի ունեցած փոփոխություններին, քննարկում են տվյալ ժամանակաշրջանում Մովսես գյուղում տեղի ունեցած փոփոխություններն ընդհանուր առմամբ՝ այսպիսով պատասխանելով հիմնական հարցին:

Գնահատում

Ինչպես նշվել է, դասի ընթացքում կկիրառվի դասընկերների գնահատումը: Սվորողներին կտրամադրվեն գնահատման չափանիշներ (տե՛ս Հավելված II-ը)՝ մյուս խմբերի աշխատանքը գնահատելու և կառուցողական առաջարկներ ներկայացնելու համար:

Տնային առաջադրանք

Տնային առաջադրանքը կլինի փաստարկված էսսե/շարադրությունը, որը կպատասխանի հիմնական հարցին (տե՛ս վերևում)՝ իրենց ընտրած խմբի (երեխաներ, երիտասարդներ, չափահասներ, տարեցներ) դիտանկյունից:

Բառարան

Ինքնավար մարզ – երկրի որևէ տարածք, որը ինքնավարության կամ ազատության որոշակի աստիճան ունի արտաքին իշխանությունից, օրինակ՝ Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանում:

Այգեպար – սահմանամերձ գյուղ Հայաստանում, Մովսես գյուղի հարևանությամբ:

Բերդ – համայնք և շրջան Հայաստանի հյուսիս-արևելքում, որտեղ գտնվում է Մովսես գյուղը:

Դոստ – որևէ մեկին մտերիմ, նվիրված մարդ, ազգական կամ ազգություն:

Փարոս – Հայաստանի Հանրապետությունում կարիքավորներին ուղղված պետական ֆինանսական աջակցության համակարգ:

Հավելված I

Աղբյուրների փաթեթներ

Խումբ 1 Ժողովրդագրություն

Աղբյուր Ա

Շամշադինի (այժմ՝ Բերդ) շրջանի բնակչությունը՝ ներառյալ Մովսեսը, 1989 թ.

Ազգություն	Թիվ	Տոկոս
Հայեր	32,820	99.5%
Ռուսներ	66	0.2%
Ադրբեջանցիներ	55	0.2%
Ուկրաինացիներ	13	0.1%
Եզդիներ	10	0.1%
Այլ	21	0.1%
Ընդամենը	32,985	100%

Աղբյուր

«ԽՍՀՄ 1989 թ. մարդահամար», Ազգային վիճակագրության կոմիտե, Երևան:

Աղբյուր Բ

Մովսեսի գյուղապետ Արարատ Ավայանը խոսում է համագյուղացիների մասին. 19-ը մայիսի, 2014 թ.

Մինչև 2014 թվականը երկարատև հակամարտությունը Մովսեսի շատ երիտասարդների հեռացրել է գյուղից՝ թողնելով բնակչություն, որի գրեթե կեսը թոշակառու է: 2014 թվականի մայիսին Մովսեսի գյուղապետը խոսել է այս իրավիճակի մասին՝ տարակուսելով, թե արդյոք երիտասարդները երբևէ կվերադառնան, և ով կֆինանսավորի տեղական համայնքների զարգացումը՝ նման վերադարձ ակնկալելով կամ այն խրախուսելու համար:

«Զգիտեմ՝ վերադարձ կլինի՞, թե՞ ոչ: Ի՞նչ պայմաններ պետք է ստեղծենք, որ հեռացածները վերադառնան, միգրացիոն եթե խաղաղություն հաստատվի, ռազմական ծախսերը պետությունն օգտագործի համայնքների զարգացման համար: Այսօր ժողովուրդը պահանջներ է ներկայացնում կառավարությանը՝ նկատի չառնելով, որ իրոք այս երկիրը պատերազմի մեջ է: Իրոք ռազմական ծախսերը շատ են: Միայն մի պարագայում է զգում, երբ որ մերոնք հակահարված են տալիս ադրբեջանցիներին, ժողովուրդը ուրախանում է: Խաղաղություն հաստատվելուց հետո որոշները կգան, մեկը իր տունը սիրելով, մեկը իր ծննդավայրը, մեկը իր հայրենիքը, մեկը իր հողը, մեկը ծնողներին նեցուկ լինելու համար»:

Աղբյուր

Հակոբյան, Թ. (2014) Մովսես գյուղը՝ հակառակորդի ափի մեջ, Սիվիլիներ, 19-ը մայիսի, <http://tinyurl.com/488d9z5v>, դիտվել է 2023 թ. հոկտեմբերի 10-ին:

Աղբյուր Գ

Մովսեսի ժողովրդագրությունը, 2016 թ.

ԸՆԴԱՄԵՆԸ	1905
Կին	1022
Տղամարդ	883